



Մեծովյան համագործակցության ցանցային նախագիծ (BSI)

Մեծովյան համագործակցության նախագիծը ([Black Sea Interconnection, BSI](#)) տարածաշրջանի ամենախոշոր գիտահետազոտական ցանցային նախագիծն է, որը սկիզբ է առել 2008 թվականի մարտ ամսին եւ նպատակ ունի ապահովել հետազոտական ցանցերի ինտերնետային կարողությունների կտրուկ աճ: Մեծովյան համագործակցության նախագծի համար հիմք է հանդիսացել ՆԱՏՕ-ի կողմից հովանավորվող «Վիրտուալ Մետաքսե Մայրուղի» նախագիծը, որն ապահովում էր արբանյակային կապ թույլ տալով ՆԱՏՕ-ի մետքսե նախագծին ի կատար ածել աճող հեռահաղորդակցական կապի պահանջները, որոնք գալիս էին Աֆղանստանի եւ Կենտրոնական Ասիայի գիտահետազոտական համայնքներից:

Նախագծի բյուջեն կազմում է 1.8 մլն եվրո, որի մեծ մասը՝ 1.4 մլն եվրոն, ֆինանսավորվելու է Եվրոպական հանձնաժողովի կողմից:

Եվրամիության կողմից ֆինանսավորվող այս նախագիծն առաջին անգամ ստեղծել է տարածաշրջանային գիտահետազոտական եւ կրթական ցանց, որը կապելու է հարավկովկասյան երկրները ([Հայաստանը /ASNET-AM/ARENA/](#), [Վրաստանը /GRENA/](#) եւ [Ադրբեջանը /AZRENA/](#)) համաեվրոպական [GEANT2](#) ցանցի հետ: Համաեվրոպական [GEANT2](#) ցանցն արդեն իսկ ծառայություն է մատուցում մայրցամաքի 30 միլիոն հետազոտողների եւ 4000 հետազոտական կենտրոնների: Ծրագրի գործընկերներն են Համաեվրոպական հետազոտական ցանցերը [/DANTE/-](#)ն, 30 եվրոպական ազգային հետազոտական եւ կրթական ցանցերը ([National Research and Education Network NRENs](#)) եւ Միջեվրոպական հետազոտական եւ կրթական ցանցային ասոցիացիան [/The Trans-European Research and Education Networking Association, TERENA/](#):

Մեծովյան համագործակցության ցանցը կապելու է Կովկասյան ակադեմիկ ցանցերը GEANT –ի հետ 34 Մբ/վ արագությամբ: Մեծովյան համագործակցությունը, բացի հեռահաղորդակցական կապի արագության վեցապատիկ աճից, մատուցելու է առաջատար ծառայություններ, այդ թվում՝ ինտերնետային հասցեների քանակի ավելացում (IPv6 ինտերնետային արձանագրության միջոցով) եւ բազմաբաշխիչ հայտարարություններ (multicast), որոնք երկուսն էլ նորություններ են համաշխարհային արագագործ հետազոտական ցանցերում: Նախագիծը լուծելու է նաեւ Հարավային Կովկասի եւ Եվրոպայի միջեւ թվային բաժանման խնդիրը՝ հնարավորություն տալով գիտահետազոտողներին եւ ուսանողներին համագործակցել իրենց եվրոպական գործընկերների հետ եւ համատեղ ցանցերի միջոցով օգտագործել մեծ ծավալի տվյալներ: